ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N 22/10/06

ք. Երևան 27 հոկտեմբերի 2022թ.

«Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» փակ բաժնետիրական ընկերությունը (այսուհետ՝ Պատվիրատու), ի դեմս գործադիր տնօրեն Հովհաննես Մովսիսյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, մի կողմից, և

«Բեգրաունդ փրոդաքշն» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը (այսուհետ՝ Կատարող), ի դեմս տնօրեն Վազգեն Պողոսյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից,

(այսուհետ յուրաքանչյուրն առանձին՝ Կողմ, միասին՝ Կողմեր),
ստորագրեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր) հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

1.1. Սույն Պայմանագրով Կատարողը պարտավորվում է Պայմանագրով սահմանված կարգով և Կողմերի կողմից համաձայնեցված ձևաչափով և եղանակով մատուցել.

1.1.1. «Մանկական Եվրատեսիլ 2022» երգի միջազգային 20-րդ հոբելյանական մրցույթի (այսուհետ նաև՝ Մրցույթ) շրջանակներում 2022 թվականի դեկտեմբերի 05-ին Հայաստանի Հանրապետության հրապարակում կայանալիք մրցույթի բացման՝ «EUROVILLAGE»-ի հանդիսավոր արարողության՝ (այսուհետ՝ Միջոցառում) կազմակերպման ծառայությունները (այսուհետ՝ Ծառայություններ), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել մատուցված Ծառայությունները և վճարել դրանց դիմաց՝ սույն Պայմանագրով սահմանված կարգով, չափով և ժամկետում:

1.2. Կողմերն արձանագրում են, որ Միջոցառման բնութագիրը, այդ թվում նաև Միջոցառման հարթակի նախնական էսքիզը սահմանվում են սույն Պայմանագրի Հավելված 1-ով:

1.3. Միջոցառման նկատմամբ բոլոր բացառիկ գույքային իրավունքները ՀՀ օրենսդրությամբ նախատեսված առավելագույն ծավալով, առանց տարածքային սահմանափակման և համապատասխան իրավունքների գործողության ամբողջ ժամանակահատվածում, պատկանելու են Պատվիրատուին: Սույն կետով նախատեսված իրավունքները ծագում են Կողմերի միջև համապատասխան հանձնման-ընդունման ակտերի ստորագրման պահից:

1.4. Կատարողը երաշխավորում է, որ Միջոցառումը կկազմակերպվի առանց անօրինական ներգործության կամ այլ մտավոր գործունեության արդյունքների անօրինական օգտագործման, դրանց ստեղծման ժամանակ չեն օգտագործվի մտավոր գործունեության այնպիսի արդյունքներ, որոնք ստեղծվել կամ ստեղծվում են այլ պատվիրատուների համար, բացառությամբ այն դեպքերի, երբ այդպիսի օգտագործումն օրենքով սահմանված կարգով համաձայնեցված է իրավատերերի հետ և չի խախտում երրորդ անձանց իրավունքները:

1.5. Միջոցառման շրջանակներում Կատարողի կողմից օգտագործվող հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների օբյեկտների օգտագործման իրավաչափության համար պատասխանատվությունը կրում է Կատարողը:

1.6. Կողմերն արձանագրում են, որ Պատվիրատուն պարտավորվում է աջակցել Կատարողին և ապահովել երրորդ անձանցից (մասնավորապես՝ ՀՀ Վարչապետի աշխատակազմից, Երևանի քաղաքապետարանից, ՀՀ Ոստիկանությունից, ՀՀ Արտակարգ իրավիճակների նախարարությունից, Շտապ բժշկական օգնությունից, «Երքաղլույս» ՓԲԸ-ից, «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ից, Հայաստանի Ազգային պատկերասրահից, Հայաստանի պատմության թանգարանից և այլն) բոլոր անհրաժեշտ համաձայնությունների, թույլտվությունների ձեռքբերումը և (կամ) նրանց հետ պայմանագրերի ստորագրումը և այլ անհրաժեշտ գործողությունների իրականացումը, որը պահանջվում է կիրառելի օրենսդրությամբ Միջոցառման պատշաճ կազմակերպման համար:

1.7. Կողմերն արձանագրում են, որ սույն Պայմանագրով սահմանված իրավունքները երրորդ անձանցից (իրավատերերից) Կատարողը ձեռք է բերելու այնպիսի ծավալով և ժամկետներով, որ Պատվիրատուն ոչ միայն կարողանա հասնել սույն Պայմանագրի ստորագրմամբ հետապնդած նպատակին, այլ նաև կարողանա Միջոցառումը (այդ թվում նաև դրա տեսանկարահանված նյութը) հետագայում տարածել համացանցում (Պատվիրատուի պաշտոնական կայքէջեր, Պատվիրատուի՝ սոցիալական ցանցում առկա պաշտոնական էջերում (ներառյալ, բայց չսահմանափակվելով, Facebook, Instagram, Twitter, Youtube և այլն) և այլ հարթակներում) առանց որևէ լրացուցիչ (իրավունքների ձեռքբերմանն ուղղված) գործողություններ կատարելու:

1.8. Կողմերն արձանագրում են, որ բոլոր այն դեպքերում, երբ Պատվիրատուն չի կարողանում իրացնել սույն Պայմանագրով սահմանված իր իրավունքը Միջոցառման շրջանակներում անհրաժեշտ իրավունքները ձեռք բերած չլինելու կամ ոչ պատշաճ կարգով կամ ոչ ամբողջական լինելու հետևանքով, Կատարողը պարտավորվում է իր հաշվին ձեռք բերել նշված իրավունքները և Պատվիրատուին փոխանցել սույն Պայմանագրով նշված ծավալով իրավունքներ: Սույն կետով նշված գործողությունը Կատարողը պարտավորվում է կատարել Կողմերի՝ սույն Պայմանագրի կատարման համար նշանակված կոնտակտային անձանց միջև համաձայնեցված ողջամիտ ժամկետներում:

1.9. Կատարողը պարտավոր է ապահովել, որպեսզի Միջոցառումը կազմակերպվի ՀՀ օրենսդրությամբ գործող՝ դրա նկատմամբ կիրառելի պահանջներին համապատասխան:

1.10. Կողմերն արձանագրում են, որ Միջոցառումը կազմակերպվում է բացառապես Պատվիրատուի պատվերով, և Կատարողն իրավունք չունի Միջոցառման շրջանակներում հիշատակել այլ ընկերությունների, գերատեսչությունների կամ այլ մարմինների, հղումներ կատարել որևէ այլ ապրանքային կամ սպասարկման նշանի, որոնք Կատարողի կողմից կներկայացվեն որպես Միջոցառման հովանավոր, գործընկեր կամ այլ կերպ Միջոցառման կազմակերպմանը աջակցություն ցուցաբերած անձինք, բացառությամբ այն դեպքերի, եթե այլ բան չի նախատեսվում Կողմերի լրացուցիչ գրավոր համաձայնությամբ: Սույն կետի խախտման դեպքում Պատվիրատուն իրավունք ունի պահանջել Կատարողից անհատույց վերացնել խախտումները, իսկ նշված պահանջը 3 (երեք) օրացուցային օրվա ընթացքում չկատարելու դեպքում՝ չընդունել Ծառայությունները և պահանջել Կատարողից վնասների ամբողջական հատուցում:

1.11. Սույն Պայմանագրով սահմանված Ծառայությունների մատուցման ժամկետը սահմանվում է սույն Պայմանագրի Հավելված 1-ով: Սույն Պայմանագրով մատուցվելիք Ծառայությունների շրջանակներում ընդգրկվող առանձին գործողությունների կատարման ձևաչափը, եղանակները, ժամկետները Կողմերի կողմից համաձայնեցվում են Կողմերի՝ սույն Պայմանագրի կատարման համար պատասխանատու ներկայացուցիչների միջև տեղեկությունների փոխանակման միջոցով՝ գրավոր ձևաչափով, այդ թվում էլեկտրոնային եղանակով:

1.12. Կողմերն արձանագրում են, որ սույն Պայմանագրով նախատեսված Ծառայությունների մատուցումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության («Գնումների մասին» ՀՀ օրենք, 15-րդ հոդված, 6-րդ ենթակետ) և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող երեսուն օրվա ընթացքում այդ նպատակով Պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում, Կատարողը համաձայնագիրը կնքում և Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

1.13. Հաշվի առնելով այն հանգամանքը, որ «Մանկական Եվրատեսիլ 2022» երգի միջազգային մրցույթի անցկացման կապակցությամբ կարող են սահմանվել լրացուցիչ պարտավորություններ մրցույթի անցկացման հետ կապված՝ Կատարողը պարտավորվում է առանց լրացուցիչ համաձայնություն տրամադրելու այդ բոլոր պարտավորությունները ստանձնել այն նույն ծավալով, որ ծավալով կսահմանվեն Պատվիրատուի համար, պայմանով, որ դրանք լինեն ողջամիտ, չառաջացնեն լրացուցիչ ֆինանսական ծախսեր Կատարողի համար և վերաբերեն սույն Պայմանագրով Կատարողի ստանձնած պարտավորություններին: Լրացուցիչ պարտավորությունների մասին Պատվիրատուն պարտավորվում է Կատարողին ծանուցել անհապաղ, որոնք ուժի մեջ են մտնում Կատարողի համար դրանց մասին ծանուցվելու պահից, եթե այլ բան չի բխում տվյալ ծանուցումներից:

1.14. Կողմերը երաշխավորում և հավաստում են, որ իրավասու են ստորագրելու սույն Պայմանագիրը և ունեն սույն Պայմանագիրը կատարելու համար բոլոր անհրաժեշտ իրավունքները, թույլտվությունները, համաձայնությունները և միջոցները:

2. ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

2.1. Ծառայությունների հանձնում-ընդունումն արձանագրվում է Կատարողի կողմից ներկայացվող հանձնման-ընդունման ակտի հիման վրա: Հանձնման-ընդունման ակտի հետ միասին Կատարողը Պատվիրատուին է ներկայացնում նաև իր կողմից հաստատված հաշիվ-վավերագիրը/հարկային հաշիվը: Ընդ որում, Կողմերն արձանագրում են, որ Միջոցառման դիմաց վճարման համար հաշիվ-վավերագիրը/հարկային հաշիվը Կատարողի կողմից դուրս է գրվում և Կատարողի հաստատումով ներկայացվում է Պատվիրատուին միայն վերջինիս կողմից Պայմանագրի 2.2. կետով սահմանված հաշվետվությունները Պայմանագրով սահմանված կարգով հաստատելուց հետո:

2.2. Միջոցառման հանձնումն արձանագրող հանձնման-ընդունման ակտի հետ միաժամանակ Կատարողը պարտավոր է Պատվիրատուին ներկայացնել սույն Պայմանագրի Հավելված 2-ով նախատեսված նախահաշվում կամ ծախսային ուղղությունները փոփոխելու մասին Կողմերի միջև գրավոր ստորագրված համաձայնությամբ նշված ծախսերի փաստացի կատարումը հիմնավորող պատշաճ փաստաթղթեր: Սույն կետով սահմանված կարգով փաստաթղթերի ներկայացման հետ միաժամանակ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում սույն Պայմանագրի Հավելված 3-ում նշված ձևով լրացված հաշվետվությունը: Ընդ որում սույն կետով սահմանված կարգով ներկայացված փաստաթղթերը պետք է համապատասխանեն Հարկային օրենսգրքի 55-րդ հոդվածի պահանջներին, իսկ սույն Պայմանագրի Հավելված 2-ում կամ ծախսային ուղղությունները փոփոխելու մասին Կողմերի միջև գրավոր ստորագրված համաձայնությամբ նշված այն ծախսերի փաստացի կատարումը, որոնք ձեռք են բերվել ֆիզիկական անձանցից ծառայությունների մատուցման կամ աշխատանքային պայմանագրի շրջանակներում, հիմնավորելու համար Կատարողը ի թիվս համապատասխան պայմանագրի և հանձնման-ընդունման ակտի պարտավորվում է ներկայացնել նաև հաշվետու ժամանակահատվածում եկամտային հարկի հաշվարկները: Ընդ որում, սույն կետով նախատեսված հանձման-ընդունման ակտը Պատվիրատուն պարտավորվում է հաստատել Պայմանագրի 2.2. կետով սահմանված փաստաթղթերը հաստատելուց հետո՝ 10 (տասը) աշխատանքային օրվա ընթացքում: Այն դեպքում, եթե Պատվիրատուն չի հաստատում հանձնման-ընդունման ակտը սույն Պայմանագրով սահմանված ժամկետում և Կատարողին չի ներկայացնում դրա հիմնավորումը, ապա Պատվիրատուն կրում է պարտավորություն սույն կետով նախատեսված ժամկետին հաջորդող առաջին իսկ աշխատանքային օրը հաստատելու Կատարողի կողմից ներկայացված հանձնման-ընդունման ակտը և հաշիվ-վավերագիրը/հարկային հաշիվը ու Պայմանագրի 4.3. կետով սահմանված ժամկետում վճարելու դրանով նախատեսված գումարը:

2.3. Սույն Պայմանագրի 2.2 կետով նախատեսված փաստաթղթերը, հաշվետվությունը չներկայացնելու կամ թերի (ոչ պատշաճ, ոչ հիմնավոր) ներկայացնելու դեպքում Պատվիրատուն չի վճարում հանձնման-ընդունման ակտով նախատեսված գումարը, այն մասով որով չի ներկայացվել կամ թերի է ներկայացվել համապատասխան ծախսի կատարումը. Պատվիրատուի կողմից համապատասխան ծախսը կհամարվի չհիմնավորված: Այն դեպքում, երբ սույն կետում նշված ոչ հիմնավոր ծախսը գումարային արտահայտությամբ մեծ է Կատարողին վճարման ենթակա գումարից, ապա այդպիսի ծախսերն ամբողջությամբ կհամարվեն չհիմնավորված և Կատարողը պարտավոր կլինի Պատվիրատուին վերադարձնել ստացված գումարների այն մասը, որը գերազանցում է չվճարված մասին՝ համապատասխան պահանջը ներկայացնելու օրվանից 15 (տասնհինգ) օրվա ընթացքում: Փաստաթղթերի՝ սույն կետով սահմանված պատշաճությունը և հիմնավորվածությունը որոշում/գնահատում է Պատվիրատուն:

2.4. Եթե Կատարող ընկերությունը Պատվիրատուին՝ Միջոցառման կազմակերպման կապակցությամբ մատուցվող Ծառայությունների 50 (հիսուն) տոկոս և ավելի մասը չի իրականացնում անձամբ, ապա պարտավոր է դրա մասին մինչև Պայմանագրի կնքումը տեղեկացնել Պատվիրատուին: Սույն կետով սահմանված դեպքում Կատարողը պարտավորվում է ծախսերը հիմնավորող փաստաթղթերի հետ միասին ներկայացնել նաև ծառայությունների մատուցմանը ներգրավված երրորդ անձանց կողմից իրականացված ծախսերը հիմնավորող փաստաթղթերը:

2.5. Կողմերն արձանագրում են, որ այն պարագայում, երբ Կատարող ընկերությունը ՀՀ օրենսդրության համաձայն հանդիսանում է ԱԱՀ վճարող ընկերություն, Պայմանագրի Հավելված 3-ով սահմանված փաստացի ծախսերը հիմնավորող հաշվետվությունները Կատարողի կողմից Պատվիրատուին ներկայացնելիս վերջինիս կողմից հաշվի է առնվում այն, որ Պայմանագրի արժեքի շրջանակներում հաշվարկված ԱԱՀ-ն չի կարող ուղղվել, այդ թվում նաև հաշվանցվել՝ Կատարողի կողմից սույն Պայմանագրի շրջանակներից դուրս իրականացվող գործունեության նպատակով: ԱԱՀ-ի գծով լրացուցիչ հատկացումները որպես հարկային պարտավորություն ենթակա են վճարման Կատարողի կողմից որպես ԱԱՀ, հակառակ դեպքում, ենթակա են վերադարձման Պատվիրատուին:

2.6. Կողմերն արձանագրում են, որ բոլոր այն դեպքերում, երբ սույն Պայմանագրի 2.2 կետի հիման վրա Կատարողը որպես ծախսերի կատարումը հիմնավորող փաստաթուղթ ներկայացնում է հսկիչ դրամարկղային կտրոն կամ միակողմանի գնման ակտ, որոնցում չի ներառվում գնորդի ՀՎՀՀ-ն, գնման առարկան, քանակը, ԱՏԳԱԱ կոդը կամ գնումը (ապրանքների կամ ծառայությունների) նույնականացնող այլ տվյալներ, Կատարողը պարտավորվում է ներկայացնել իր կողմից հաստատված գնման մանրամասներին վերաբերող բացվածք, որի հավաստիության համար պատասխանատվություն է կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

2.7. Սույն Պայմանագրի 2.2. կետերով սահմանված դեպքերում Կատարողը Պատվիրատուին է տրամադրում փաստաթղթերի լուսապատճենները Կողմերի՝ սույն Պայմանագրի կատարման համար պատասխանատու ներկայացուցիչների միջև համաձայնեցված կարգով: Ներկայացված փաստաթղթերի՝ Պատվիրատուի

կողմից հավաստիության՝ պատշաճության և հիմնավորվածության գնահատման ընթացքում Պատվիրատուն իրավունք ունի նաև պահանջել ներկայացնել փաստաթղթերի բնօրինակները, որոնք Պատվիրատուի կողմից դիտարկվելուց հետո վերադարձվում են Կատարողին: Կողմերն արձանագրում են, որ Պատվիրատուի կողմից Կատարողի ներկայացրած փաստաթղթերի պատշաճությունն ու հիմնավորվածությունը գնահատվում է դրանք ներկայացնելուց հետո՝ 10 (տասը) աշխատանքային օրվա ընթացքում:

2.8. Եթե Կատարողը Պատվիրատուի կողմից չհիմնավորված ծախսերի մասին տեղեկանալուց հետո 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնում է համապատասխան ծախսերի կատարումը հիմնավորող փաստաթղթերը, ապա կախված ներկայացված փաստաթղթերով հիմնավոր համարված ծախսերի ծավալից Պատվիրատուն կա՛մ վճարում է Կատարողին վճարման ենթակա ամբողջ գումարը, կա՛մ ձեռնարկում է սույն Պայմանագրի 2.3. կետով սահմանված միջոցները: Կատարողը սույն կետով սահմանված իրավական հնարավորությունից կարող է օգտվել միայն մեկ անգամ:

2.9. Կողմերն արձանագրում են, որ սույն Պայմանագրի 2.3. կետով սահմանված հիմքով Պատվիրատուի կողմից Կատարողին վճարում չկատարելու դեպքը չի անդրադառնում սույն Պայմանագրով սահմանված Միջոցառումը ամբողջությամբ (սույն Պայմանագրի Հավելված 1-ով նշված բնութագրին համապատասխան) սույն Պայմանագրով սահմանված կարգով կազմակերպելու Կատարողի պարտավորության վրա:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. ***Պատվիրատուն իրավունք ունի՝***

3.1.1. Օգտագործել սույն Պայմանագրի շրջանակներում ստեղծված և/կամ ձեռք բերված օբյեկտները՝ այդ թվում նաև, մտավոր սեփականության արդյունքները, Ֆոտոշարքը և պաստառը սեփական հայեցողությամբ, ինչպես նաև երրորդ անձանց արգելել կամ թույլատրել օգտագործել դրանք,

3.1.2. Կատարողից պահանջել սույն Պայմանագրով նախատեսված Ծառայությունները մատուցել ամբողջությամբ, պատշաճ որակով և սահմանված ժամկետներում,

3.1.3. Հետևել Ծառայությունների մատուցման ընթացքին և որակին՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը՝ պահանջելով տրամադրել Ծառայությունների մատուցման ընթացքի և որակի վերաբերյալ Պատվիրատուին հետաքրքրող տեղեկատվությունը,

3.1.4. Սույն Պայմանագրով իր ակնկալած արդյունքին հասնելու նպատակով Կատարողին տալ Ծառայությունների մատուցմանը վերաբերելի ողջամիտ ցուցումներ,

3.1.5. Պահանջել Կատարողից աջակցել Պատվիրատուին Ծառայությունների մատուցման ընթացքը և որակը ստուգելիս, ինչպես նաև Ծառայություններն ընդունելիս,

3.1.6. Միակողմանիորեն լուծել սույն Պայմանագիրը և Կատարողից պահանջել հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները, եթե՝

I. Կատարողը խախտել է սույն Պայմանագրի Հավելված 1-ով սահմանված Միջոցառման բնութագիրը և ողջամիտ ժամկետում իր հաշվին չի շտկել նշված թերությունը կամ խախտման բնույթից ակնհայտ է, որ այն չի կարող շտկվել ողջամիտ ժամկետում,

II. Կատարողը սույն Պայմանագրով սահմանված ժամկետներում չի մատուցել Ծառայությունները,

III. Կատարողն այլ կերպ թույլ է տվել սույն Պայմանագրի էական խախտում:

3.2. ***Պատվիրատուն պարտավոր է՝***

3.2.1. Ողջամտության սահմաններում Կատարողին ապահովել սույն Պայմանագրով սահմանված Ծառայությունների մատուցման համար անհրաժեշտ բոլոր պայմաններով, այդ թվում, բայց չսահմանափակվելով, նշանակել Պայմանագրի կատարման համար պատասխանատու կոնտակտային անձ, ով Կատարողի հետ կհամաձայնեցնի Պայմանագրով առանձին գործողությունների իրականացման ժամկետները և այլն,

3.2.2. Սույն Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետում ընդունել սույն Պայմանագրին համապատասխան Կատարողի կողմից մատուցված Ծառայությունները, իսկ թերություններ հայտնաբերելու դեպքում՝ այդ մասին հայտնել Կատարողին,

3.2.3. Վճարել Կատարողին մատուցված Ծառայությունների դիմաց՝ սույն Պայմանագրով սահմանված կարգով, չափով և ժամկետում:

3.3. ***Կատարողն իրավունք ունի՝***

3.3.1. Ողջամտության սահմաններում Պատվիրատուից պահանջել ապահովել իրեն սույն Պայմանագրի կատարման համար անհրաժեշտ բոլոր պայմաններով,

3.3.2. Պատվիրատուից պահանջել սույն Պայմանագրով սահմանված կարգով և ժամկետում ընդունել պատշաճ մատուցված Ծառայությունները,

3.3.3. Պատվիրատուից պահանջել վճարել իր կողմից սույն Պայմանագրի պայմաններին համապատասխան ընդունված Ծառայությունների դիմաց՝ սույն Պայմանագրով սահմանված կարգով, չափով և ժամկետում:

3.4. ***Կատարողը պարտավոր է՝***

3.4.1. Ինչպես սոցիալական մեդիա հարթակներում իր պաշտոնական էջերի միջոցով, այնպես էլ որևէ այլ հարթակներում առանց Պատվիրատուի նախնական գրավոր համաձայնության չտարածել որևէ տեղեկատվություն սույն Պայմանագրով մատուցվող Ծառայությունների վերաբերյալ, ներառյալ՝ Միջոցառման գաղափարի, դրա անցկացման ժամկետի, առկայության դեպքում նաև ներգրավված հաղորդավարների կամ Միջոցառմանը վերաբերող որևէ այլ հանգամանքի վերաբերյալ, ինչպես նաև երաշխավորել Ծառայությունների մատուցման գործընթացում աշխատանքային, ծառայությունների մատուցման կամ որևէ այլ պայմանագրի հիման վրա ներգրավված անձանց կողմից այդպիսի տեղեկատվության գաղտնիության պահպանումը,

3.4.2. Ծառայությունները մատուցել անձամբ, սեփական ուժերով և միջոցներով: Ծառայությունների մատուցմանը Կատարողի կողմից երրորդ անձանց ներգրավելը հնարավոր է միայն Պատվիրատուի նախնական գրավոր համաձայնությամբ,

3.4.3. Ծառայությունները մատուցել պատշաճ որակով, ՀՀ օրենսդրության պահանջներին, ինչպես նաև Ծառայությունների մատուցումը կարգավորող կիրառելի նորմերին, կանոններին և ստանդարտներին համապատասխան,

3.4.4. Ծառայությունները մատուցել ամբողջությամբ, իսկ արդյունքները Պատվիրատուին հանձնել՝ սույն Պայմանագրով սահմանված ժամկետներում և կարգով,

3.4.5. Միջոցառման սցենարը, ինչպես նաև հաղորդավարի թեկնածուին (առկայության դեպքում) համաձայնեցնել Պատվիրատուի հետ,

3.4.6. Հետևել սույն Պայմանագրի պայմանների սահմաններում Պատվիրատուի տված ողջամիտ ցուցումներին,

3.4.7. Աջակցել Պատվիրատուին Ծառայությունների մատուցման ընթացքը և որակը ստուգելիս, սույն Պայմանագրի 3.1.3 կետով սահմանված կարգով Պատվիրատուի համապատասխան պահանջը ստանալուց 2 (երկու) աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին տրամադրել Ծառայությունների մատուցման ընթացքի և որակի վերաբերյալ Պատվիրատուին հետաքրքրող տեղեկատվությունը,

3.4.8. Աջակցել Պատվիրատուին Ծառայություններն ընդունելիս,

3.4.9. Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում անհատույց վերացնել Ծառայությունների մատուցման արդյունքներում հայտնաբերված թերությունները,

3.4.10. Ամբողջությամբ հատուցել Միջոցառման կազմակերպման ընթացքում իր կողմից երրորդ անձանց հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների կամ ՀՀ օրենսդրության այլ պահանջների խախտման հետևանքով Պատվիրատուի կրած բոլոր վնասները,

3.4.11. Սույն Պայմանագրի կատարման ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսվելու դեպքում անմիջապես հայտնել Պատվիրատուին:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՐԺԵՔԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1. Սույն Պայմանագրով նախատեսված Միջոցառման կազմակերպման ընդհանուր արժեքը՝ ներառյալ բոլոր կիրառելի հարկերը, սահմանվում է սույն Պայմանագրի Հավելված 1-ով՝ հիմք ընդունելով սույն Պայմանագրի Հավելված 2-ով նախատեսված նախահաշիվը:

4.2. Կողմերն արձանագրում են, որ Ծառայությունների մատուցման ընթացքում, արտադրական անհրաժեշտությունից ելնելով, սույն Պայմանագրի Հավելված 2-ով նախատեսված նախահաշվի ծախսային ուղղությունները կարող են Կողմերի գրավոր համաձայնությամբ ենթարկվել փոփոխությունների, սակայն ոչ ավելի, քան Պայմանագրի Հավելված 2-ով հաստատված նախահաշվի յուրաքանչյուր տողի 10 (տասը) տոկոսի չափով: Բոլոր դեպքերում, այդպիսի փոփոխությունների չպետք է հանգեցնեն սույն Պայմանագրի Հավելված 1-ով Միջոցառման կազմակերպման համար սահմանված ընդհանուր արժեքի ավելացմանը:

4.3. Սույն Պայմանագրի 4.1 կետով սահմանված գումարը Պատվիրատուն վճարում է Կատարողի բանկային հաշվեհամարին անկանխիկ փոխանցմամբ՝ համաձայն սույն Պայմանագրի Հավելված 1-ով սահմանված ժամանակացույցի:

4.4. Կողմերն արձանագրում են, որ բոլոր այն դեպքերում, երբ սույն Պայմանագրի Հավելված 1-ում նշված ժամանակցույցով նախատեսված է կանխավճարի վճարման Պատվիրատուի պարտականությունը, ապա Պատվիրատուն նշված կանխավճարը կարող է մարել սույն Պայմանագրի Հավելված 1-ում նշված կարգով, ինչը գործնականում նշանակում է, որ Կատարողի կողմից Պայմանագրով սահմանված կարգով դուրս գրված հաշիվ-վավերագրով/հարկային հաշվով սահմանված գումարի կամ դրա մի մասի չվճարվումը չի համարվի խախտում ո՛չ Պայմանագրի, ո՛չ էլ կիրառելի օրենսդրության տեսանկյունից:

4.5. Վճարման ամսաթիվ է համարվում Պատվիրատուի բանկային հաշվից դրամական միջոցների ելքագրման ամսաթիվը:

4.6. Բանկային ծախսերը Պատվիրատուի բանկում կատարում է Պատվիրատուն, իսկ Կատարողի բանկում՝ Կատարողը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1. Կողմերը պատասխանատվություն են կրում սույն Պայմանագրով նախատեսված պարտականությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար:

5.2. Պատվիրատուի պահանջով Կատարողն իր հաշվին, իր միջոցներով և Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում պարտավոր է վերացնել մատուցված Ծառայություններում իր մեղքով տեղ գտած թերությունները: Նշված թերությունները Պատվիրատուի սահմանած ողջամիտ ժամկետում Կատարողի կողմից չվերացվելու դեպքում Պատվիրատուն իրավասու է Կատարողից գանձել տուգանք՝ Ծառայությունների ընդհանուր արժեքի 5 (հինգ) տոկոսի չափով, պահանջել իր կրած վնասների հատուցում և ըստ հայեցողության սույն Պայմանագրի 3.1.6 կետով սահմանված կարգով լուծել Պայմանագիրը:

5.3. Կատարողի կողմից սույն Պայմանագրով նախատեսված Միջոցառման կազմակերպման ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուն իրավունք ունի Կատարողից գանձելու տույժ՝ կետանցի յուրաքանչյուր օրվա համար Ծառայությունների ընդհանուր արժեքի 0,1 (զրո ամբողջ մեկ տասնորդական) տոկոսի չափով և ըստ հայեցողության սույն Պայմանագրի 3.1.6 կետով սահմանված կարգով լուծելու Պայմանագիրը:

5.4. Սույն Պայմանագրի 5.2. կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3. կետով նախատեսված տույժը, կարող է հաշվարկվել և հաշվանցվել Կատարողին վճարման ենթակա գումարներից:

5.5. Մատուցված Ծառայությունների դիմաց վճարելու սույն Պայմանագրով սահմանված ժամկետը խախտելու դեպքում Կատարողն իրավունք ունի Պատվիրատուից գանձելու տույժ՝ կետանցի յուրաքանչյուր օրվա համար վճարման ենթակա գումարի 0,1 (զրո ամբողջ մեկ տասնորդական) տոկոսի չափով, բայց ոչ ավելի քան վճարման ենթակա գումարի 5 (հինգ) տոկոսը:

5.6. Կողմերը արձանագրում են, որ սույն Պայմանագրի 2.9 կետի հիմքով Պատվիրատուի կողմից Կատարողին վճարման ենթակա գումարը չվճարելը կամ պատշաճ և վավեր փաստաթղթեր ներկայացնելուց հետո վճարելը չի համարվի սույն Պայմանագրի 5.5 կետի իմաստով վճարման ժամկետի խախտում, և տվյալ դեպքում սույն Պայմանագրի 5.5 կետով սահմանված տույժը չի հաշվարկվի և գանձվի:

5.7. Կատարողը պարտավոր է Պատվիրատուին զերծ պահել երրորդ անձանց կողմից Պատվիրատուին ներկայացված ցանկացած այնպիսի պահանջից, վեճից, հայցից, որոնք Կատարողի կողմից սույն Պայմանագրով նախատեսված պարտականությունների կամ երաշխիքների խախտման արդյունք են, ինչպես նաև հատուցել նման պահանջի, վեճի կամ հայցի արդյունքում Պատվիրատուին պատճառված բոլոր վնասները:

5.8. Տուժանքների վճարումը չի ազատում Կողմերին սույն Պայմանագրով ստանձնած պարտականությունների ամբողջական կատարումից, եթե այլ բան նախատեսված չէ ՀՀ օրենսդրությամբ:

5.9. Սույն Պայմանագրով չնախատեսված դեպքերում Կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6. ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ

6.1. Սույն Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն Պայմանագիրը ստորագրելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են ջրհեղեղը, հրդեհը, երկրաշարժը, փոթորիկը, սողանքը և բնական այլ աղետները, պայթյունը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքացիական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, համաճարակները, էմբարգոն, սույն Պայմանագրի էական պայմանները

կարգավորող օրենսդրության փոփոխությունները, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն Պայմանագրով սահմանված պայմաններով պարտավորությունների կատարումը:

6.2. Կողմը, որի մոտ ծագել է ֆորսմաժորային իրավիճակ, պետք է առաջին իսկ հնարավորության դեպքում, սակայն ոչ ուշ, քան նման իրավիճակի վրա հասնելուց 10 (տասը) աշխատանքային օրվա ընթացքում ծանուցի մյուս Կողմին նման իրավիճակի առաջացման, իսկ հետագայում նաև՝ բնականոն պայմանների վերականգնման մասին, հակառակ դեպքում կզրկվի ապագայում ֆորսմաժորային իրավիճակը որպես հիմնավորում օգտագործելու իրավունքից:

6.3. Ֆորսմաժորային իրավիճակի վերաբերյալ հանդիպակաց Կողմին ծանուցում ուղարկելու պահից Կողմի համապատասխան պայմանագրային պարտավորությունների կատարման պահանջը համարվում է կասեցված մինչև Պայմանագրի կատարման համար անհրաժեշտ պայմանների վերականգնումը:

6.4. Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 2 (երկու) ամսից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու Պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս Կողմին:

7. ԳԱՂՏՆԻՈՒԹՅՈՒՆ

7.1. Սույն Պայմանագրի վերաբերյալ բանակցություններին կամ Պայմանագրի պայմաններին, այդ թվում՝ արժեքին, Պայմանագրից բխող գործողություններին առնչվող ողջ տեղեկատվությունը (այդ թվում՝ փաստաթղթերը), բացառությամբ զանգվածային տեղեկատվության միջոցներում առկա տեղեկատվության (եթե այդպիսին առկա է) և ՀՀ օրենսդրությամբ սահմանված Պայմանագրի պայմանների կամ դրանց մի մասի պարտադիր հրապարակման դեպքերի, գաղտնի է և չի կարող տրամադրվել որևէ երրորդ կողմի, բացառությամբ մյուս Կողմի նախապես տրամադրած գրավոր համաձայնության կամ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված դեպքերի:

7.2. Կողմերը պարտավոր են սույն Պայմանագրի գործողության, ինչպես նաև դրան հաջորդող 3 (երեք) տարիների ընթացքում, ապահովել համապատասխան տեղեկատվության գաղտնիությունը և պատշաճ պաշտպանությունը՝ գործադրելով առնվազն այնպիսի ջանքեր, ինչպիսիք կգործադրեին իրենց իսկ նման տեղեկատվության պաշտպանության համար:

8. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

8.1. Սույն Պայմանագիրն ուժի մեջ է մտնում երկկողմանի ստորագրման պահից և գործում՝ մինչև Կողմերի համար դրանով նախատեսված պարտավորությունների ամբողջական և պատշաճ կատարումը:

8.2. Առկայության դեպքում, սույն Պայմանագրի Հավելված 2-ով նախատեսված հիմնական միջոցները, որոնք ձեռք են բերվում Կատարողի կողմից սույն Պայմանագրով նախատեսված Ծառայությունների մատուցման համար, անցնում են Պատվիրատուի սեփականությանը՝ սույն Պայմանագրով նախատեսված Ծառայությունների մատուցման ավարտին Կողմերի միջև ստորագրվող հանձնման-ընդունման ակտի հիման վրա:

8.3. Սույն Պայմանագիրը ստորագրող Կողմերի ներկայացուցիչները սույնով հաստատում են, որ ունեն բոլոր անհրաժեշտ լիազորությունները ստորագրելու սույն Պայմանագիրը և ներկայացնելու Կողմերին Պայմանագրով նախատեսված հարաբերություններում:

8.4. Կողմերից որևէ մեկն իրավունք չունի սույն Պայմանագրով սահմանված իր իրավունքներն ու պարտականությունները փոխանցելու երրորդ անձի՝ առանց մյուս Կողմի գրավոր համաձայնության:

8.5. Սույն Պայմանագրի բոլոր հավելվածները հանդիսանում են Պայմանագրի անբաժանելի մասը:

8.6. Սույն Պայմանագրի յուրաքանչյուր կետ կամ պայման իրենից ներկայացնում է առանձին և ինքնուրույն դրույթ: Եթե Պայմանագրի որևէ դրույթ դատական կարգով կամ այլ իրավասու մարմնի որոշմամբ ճանաչվի անվավեր կամ կատարման ոչ ենթակա, ապա սույն Պայմանագրի մնացած բոլոր դրույթները կպահպանեն իրենց ուժը, բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված դեպքերի:

8.7. Սույն Պայմանագրում ցանկացած փոփոխություն և լրացում վավեր է, եթե այն կատարված է գրավոր և ստորագրված է Կողմերի ներկայացուցիչների կողմից, կնքիք առկայության դեպքում նաև կնքված է:

8.8. Սույն Պայմանագիրը կարող է վաղաժամկետ լուծվել Պայմանագրով, ՀՀ օրենսդրությամբ նախատեսված հիմքերով և կարգով, ինչպես նաև Կողմերի փոխադարձ համաձայնությամբ: Պատվիրատուն իրավունք ունի ցանկացած պահի միակողմանիորեն լուծելու սույն Պայմանագիրը՝ այդ մասին առնվազն 15 (տասնհինգ) օրացուցային օր առաջ ծանուցելով Կատարողին: Պատվիրատուի նախաձեռնությամբ Պայմանագրի վաղաժամկետ լուծման հետևանքները կարգավորվում են սույն Պայմանագրով և/կամ ՀՀ օրենսդրությամբ՝ կախված այդպիսի լուծման շարժառիթ հանդիսացած հանգամանքներից: Կատարողի նախաձեռնությամբ ՀՀ օրենսդրությամբ սահմանված հիմքերի առկայությամբ պայմանավորված

Պայմանագրի վաղաժամկետ լուծման դեպքում, Կատարողը պարտավոր է ամբողջությամբ հատուցելու Պայմանագրի վաղաժամկետ լուծման հետևանքով Պատվիրատուին պատճառված վնասները:

8.9. Պայմանագրի շրջանակներում Կողմերի միջև փաստաթղթերի, ծանուցումների առաքումը, տեղեկությունների փոխանակությունն իրականացվում է գրավոր կերպով՝ սույն Պայմանագրի վավերապայմաններում նշված ծանուցման հասցեներով փոստային առաքմամբ կամ առձեռն հանձնելու միջոցով կամ Կողմերի համաձայնությամբ նախատեսված այլ եղանակներով:

8.10. Կողմերից յուրաքանչյուրի անվանման, հասցեի, վճարման կամ այլ վավերապայմանների փոփոխության դեպքում, համապատասխան Կողմը պարտավոր է այդ մասին պատշաճ կերպով գրավոր ծանուցել մյուս Կողմին՝ այդպիսի փոփոխությունից 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում, հակառակ դեպքում՝ նախկինում տրամադրված վավերապայմաններով արված վճարումները, ուղարկված ծանուցումները համապատասխանաբար կհամարվեն ժամանակին կատարված կամ պատշաճ հասցեով ուղարկված:

8.11. Սույն Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով՝ մեկամսյա ժամկետում: Բանակցությունների արդյունքում համաձայնություն ձեռք չբերվելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.12. Սույն Պայմանագրի առարկային վերաբերող և սույն Պայմանագրով ուղղակիորեն չկարգավորված բոլոր հարաբերությունները կարգավորվում են ՀՀ օրենսդրությամբ:

8.13. Սույն Պայմանագիրը կազմված է հայերենով, երկու հավասարազոր օրինակներից: Յուրաքանչյուր Կողմին տրվում է Պայմանագրի մեկական օրինակ

ԿՈՂՄԵՐԻ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Պատվիրատու	**Կատարող**
«Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ	**«Բեգրաունդ փրոդաքշն» ՍՊԸ**
Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Գ. Հովսեփյան 26	Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Անտառային փ. 160/14 8
ՀՎՀՀ՝ 01540062	ՀՎՀՀ՝ 02676654
«Ինեկոբանկ» ՓԲԸ	«Էվոկաբանկ» ՓԲԸ
Հ/Հ՝ 2050022082671001	Հ/Հ՝ 16600559951800
Հ. Մովսիսյան	**Վ. Պողոսյան**
Գործադիր տնօրեն	*Տնօրեն*

	ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ, ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ԺԱՄԿԵՏԸ, ԱՐԺԵՔԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ	
1	**Միջոցառման անվանումը**	«Մանկական Եվրատեսիլ 2022» երգի միջազգային 20-րդ հոբելյանական մրցույթի բացման հանդիսավոր արարողությունը
2	**Միջոցառման բնութագիրը**	**«ՄԱՆԿԱԿԱՆ ԵՎՐԱՏԵՍԻԼ 2022» ԵՐԳԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ 20-ՐԴ ՀՈԲԵԼՅԱՆԱԿԱՆ ՄՐՑՈՒՅԹԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ EUROVILLAGE-Ի ԲԱՑՄԱՆ ԵՎ ԳԼԽԱՎՈՐ ՏՈՆԱԾԱՌԻ ԼՈՒՅՍԵՐԻ ՎԱՌՄԱՆ ՀԱՆԴԻՍԱՎՈՐ ԱՐԱՐՈՂՈՒԹՅԱՆ ՍՑԵՆԱՐ** «Մանկական Եվրատեսիլ 2022» երգի միջազգային 20-րդ հոբելյանական մրցույթի բացման հանդիսավոր արարողությունը սկսվում է Հանրապետության Հրապարակում: Նալբանդյան փողոցի երկայնքով տեղակայված են լինելու կամարներ և զարդարանքներ: 16 երկրների ներկայացուցիչները հանդիսավոր կարմիր գորգով մոտենալու են Հայաստանի ազգային պատկերասրահի շենքին, որի 2-րդ հարկում էլ տեղի կունենան անհատական փոքրիկ հարցազրույցներ, և այս ամենը կեզրափակվի Մանկական Եվրատեսիլ երգի միջազգային մրցույթի հերթականությունը որոշող վիճակահանությամբ: Այս ամբողջ արարողակարգը կցուցադրվի ուղիղ եթերով և զուգահեռաբար Աբովյան և Նալբանդյան փողոցների մոտ տեղակայված 2 մեծ էկրաններին: Ընթացքը կվարեն հաղորդավարները, ովքեր նաև կներգրավվեն հանդիսատեսին՝ էլ ավելի հետաքրքիր դարձնելով բացման հատվածը: Այնուհետև Հաղորդավարը կներկայացնի, որ տեղի է ունենալու հեքիաթային շոու ծրագիր, որն էլ անմիջապես կսկսվի բեմի կենտրոնական հատվածից: *** Հեքիաթային ամրոցի տանիքից եթերային բարի փերին իր լիրիկական երգով և տրամադրությամբ պատմում է բոլորին, որ սա է հսկում ամրոցը, և նախապատրաստում բոլորին մի մեծ տոնի, մի հեքիաթային իրադարձության, որը տեղի է ունենալու այս տարի՝ հենց այս ամրոցում: Դեռևս ամբողջությամբ չբացահայտած գաղտնիքը՝ իր հակասական խոսքով իրեն ընդհատում է իր երկվորյակ Քույրը, ով իր փառասեր և խորամանկ միտումներով կիսվում է հանդիսատեսի հետ՝ իր հետ բեմ բերելով մի մեծ կախարդական հոլ: Քույրն ունի տեղեկություն, որ այս տարի ամրոց են գալու Եվրատեսիլի բոլոր մասնակիցները, և միասին վառելու են տոնածառի լույսերը: Չարաճճի փերին փորձում է ամեն գնով չզիջել այդ մեծ պատիվը երեխաներին և ինքնուրույն իրագործել այդ ամենը՝ մինչ նրանց գալը: Նա սկզբում տանջվում է հասկանալու համար, թե ինչու է այս հոլը կախարդական և ինչպես է այն աշխատում, որպեսզի պտտոյտով իրագործվի հրաշքը: Չարաճճի փերին նույնպես ունի կախարդական ուժ՝ ինչպես իր բարի քույրը, և շատ վստահ փորձեր է անում, սակայն նրա ոչ մի փորձը հաջողություն չի ունենում: Նա որոշում է դիմել Նոր տարվա հեքիաթն իրականություն դարձնող հեքիաթային էակներին: *** Սառցե դաշտի բնակիչները պինգվիններն են, ովքեր իրենց երգերով ու պարերով կուտակում են էներգիա և տալիս Չարաճճի փերիին, որն էլ իր հերթին անընդհատ շտապեցնում է կախարդական էակներին, որպեսզի մինչև երեխաների ժամանելն ամեն բան արդեն արված լինի: Տեսնելով, որ ստացված էներգիան բավական չէ կախարդական հոլը պտտացնելու համար՝ Չարաճճի փերին որոշում է արթնացնել նաև մյուս էակներին: Այդ ընթացքում բարի փերին նախատում է իր քրոջն իր նենգ միտումների համար, և վստահեցնում, որ իր մոտ ոչինչ էլ չի ստացվի: Թզուկները, ովքեր ապրում են տաքուկ ու գեղեցիկ տնակներում՝ սառցե դաշտի հակառակ կողմում՝ բեմի մյուս ծայրում, նույնպես կուտակում են էներգիա, որպեսզի փոխանցեն Չարաճճի փերիին: Իրենց հետաքրքիր պարային հատվածում տեսնում ենք, թե ինչպես է փերին ոգևորում և ջատագովում նրանց, որպեսզի արագացնեն իրագործել իր մտադրությունը: Այս անգամ ևս նույն կերպ է ավարտվում ամեն ինչ, կուտակված էներգիան բավական չէ:

		Հաջորդիվ՝ արթնանում են եղջերուները, որոնք պտտվող հարթակով կարուսելի մի մասիկն են կազմում: Նրանք իրենց կատարումով կուտակված էներգիան փոխանցում են Չարաճճի փերիին և ունենում նույն արդյունքը: Վհատված Չարաճճի փերին արթնացնում է իր վերջին օգնական էակներին՝ փոստատար կախարդական արջերին, ովքեր գնացքով բերում են բազում նամակներ երեխաներից՝ նոր տարվա հրաշքը իրականություն դարձնելու համար: Նրանք նույնպես ստացված էներգիան փոխանցում են Փերիին: Ահա մոտեցել է այն կարևոր պահը, երբ բոլոր էներգիաները կարծես թե հավաքվել են, և բոլոր հեքիաթային էակներն իրենց համատեղ երգով կարող են պտտել հրաշքը և վառել տոնածառի լույսերը, սակայն տեսնում ենք, որ էլի մի էներգիա պակասում է: Բարի Փերին էլ հիշեցնում է իր քրոջը, որ հեքիաթը կիրագործվի միայն երեխաների մաքուր էներգիաների շնորհիվ, քանի որ նա ամենամեծ ուժն ունի իր մեջ, և առանց որի անհնար է որ աշխարհը գոյություն ունենա: Երգի ամենակարևոր կուլմինացիոն պահին՝ բեմ են գալիս Եվրատեսիլի մասնակիցները և իրենց երգով և հզոր էներգիայով պտտում կախարդական հոլը, և, ահա, վառում են տոնածառի լույսերը: Այդ ընթացքում, Բարի փերին՝ հասկանալով, որ իր քույրիկն անուղղելի է, օգնության է կանչում մի խումբ թիթեղյա զինվորներ (оловянные солдатики), որոնք բարձրացնում են Չարաճճի փերիին ամորցի տանիք որպեսզի այլևս չփորձի խոչընդոտներ ստեղծել երեխաների համար: *** Տոնածառի լույսերը վառելուց հետո, երբ բոլորը հիացած սպասում են համերգային ծրագրին, Հաղորդավարը դուրս է գալիս և տպավորված նկարագրում է իր տեսած հրաշքը՝ հանդիսատեսին հարցնելով, թե արդյոք որևէ մեկը գիտի, թե որտեղ է մեր Չարաճճի փերին: Եվ հանկարծ փերին ինքը ընդհատում է հաղորդավարի խոսքը ամրոցի տանիքից, և խնդրում կախարդանքի միջոցով ազատել իրեն: Հաղորդավարը միանում է այդ խաղին, և փորձում օգնել փերիին, որն էլ իր հերթին նկարագրում է, թե ինչպես էր աշխատում արդեն իր համար ոչ այդքան սիրելի այդ կախարդական մեծ հոլը: Մի քանի պտույտ, և այ քեզ հրաշք, Չարաճճի փերին կանգնած է հաղորդավարի կողքին, և նրանք միասին որոշում են վարել համերգային հատվածը:
3	**Միջոցառման նախնական էսքիզը**	

4	**Պայմանագրի ընդհանուր արժեքը**	418 998 000 (չորս հարյուր տասնութ միլիոն ինը հարյուր ինըսունութ հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ:
5	**Ծառայությունների մատուցման ժամկետը**	Ծառայությունները մատուցվում են Պայմանագրի 1.12. կետով նախատեսված՝ ֆինանսական միջոցների առկայության վերաբերյալ Կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման օրվանից մինչև 2022թ.-ի դեկտեմբերի 05-ը ներառյալ:
6	**Վճարման ժամանակացույցը**	
	Վճարվող գումար (ՀՀ դրամ)	**Վճարման ժամկետ (ներառյալ)**
	70% որպես կանխավճար	Պայմանագրի 1.12. կետով նախատեսված՝ Ծառայությունների մատուցման համար ֆինանսական միջոցների առկայության վերաբերյալ Կողմերի միջև համապատասխան համաձայնագիրը կնքելուց հետո 3 (երեք) աշխատանքային օրվա ընթացքում:
	Հանձնման-ընդունման ակտով փաստացի մատուցված Ծառայությունների ընդհանուր արժեք	Միջոցառման հանձնման-ընդունման ժամանակ համապատասխան հանձնման-ընդունման ակտերի և հաշիվ-վավերագրերի/հարկային հաշվի երկկողմանի ստորագրվելուց և սույն պայմանագրի 2.7. կետով սահմանված ժամկետում փաստաթղթերի գնահատումից հետո 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում:

ԿՈՂՄԵՐԻ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Պատվիրատու
«Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ

Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Գ. Հովսեփյան 26
ՀՎՀՀ՝ 01540062
«Ինեկոբանկ» ՓԲԸ
Հ/Հ՝ 2050022082671001

Հ. Մովսիսյան
Գործադիր տնօրեն

Կատարող
«Բեգրաունդ փրոդաքշն» ՍՊԸ

Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Անտառային փ. 160/14 8
ՀՎՀՀ՝ 02676654
«Էվոկաբանկ» ՓԲԸ
Հ/Հ՝ 16600559951800

Վ. Պողոսյան
Տնօրեն

Հավելված 2
27 հոկտեմբերի 2022թ.-ին ստորագրված
N 22/10/06 պայմանագրի

Նախահաշիվ

«Մանկական Եվրատեսիլ 2022» երգի միջազգային 20-րդ հոբելյանական մրցույթի կազմակերպման և գլխավոր տոնածառի լույսերի վառման արարողության կազմակերպման ծախսերի

N	Անվանումը	Չափման միավորը	Քանակը	Միավորի արժեքը, ներառյալ հարկերը, ՀՀ դրամ	Ընդամենը արժեքը, ներառյալ հարկերը, հազ. դրամ
1	**Տեխնիկական ապահովման ծախսեր, այդ թվում**				
1.1	Բեմ, Մետաղական կոնստրուկցիաներ, Լուսային սարքավորումներ, LED էկրաններ	ծառայություն	1	47,000,000.0	47,000.0
1.2	LED պրոյեկտորների վարձակալություն, չափագրում, սպասարկում	ծառայություն	1	8,000,000.0	8,000.0
1.3	LED պրոյեկցիայի կոնտենտ	ծառայություն	1	1,300,000.0	1,300.0
2	**Դեկորացիա**				
2.1	**Բեմի հիմնական դեկորացիա, այդ թվում**				
2.1.1	Բեմի հիմնական դեկորացիա	ծառայություն	1	161,065,000.0	161,065.0
2.1.2	Ջրավազանի հատակի ծածկի (2000քմ) վարձակալություն	ծառայություն	1	38,000,000.0	38,000.0
2.1.3	Բեմական հագուստներ	ծառայություն	1	8,000,000.0	8,000.0
2.1.4	Հետնաբեմ	ծառայություն	1	7,000,000.0	7,000.0
2.1.5	Սառցադաշտ	ծառայություն	1	16,000,000.0	16,000.0
2.1.6	Տոնածառի լույսերի վառման համար հատուկ լուսային և լազերային սարքեր	ծառայություն	1	5,000,000.0	5,000.0
3	**Երաժշտական մաս**				
3.1	Դերասաններ ու հաղորդավարներ	ծառայություն	1	3,000,000.0	3,000.0
3.2	Պարային խմբեր	ծառայություն	1	4,000,000.0	4,000.0
3.3	Երգերի խոսքերի ստեղծում	ծառայություն	1	2,100,000.0	2,100.0
3.4	Երգերի գործիքավորում	ծառայություն	1	2,400,000.0	2,400.0
3.5	Երգերի ձայնագրություն, կենդանի գործիքների ձայնագրում, միքս-մաստերինգ	ծառայություն	1	1,700,000.0	1,700.0
4	**Ստեղծագործական մաս**				
4.1	Բեմադրող ռեժիսոր	ծառայություն	1	3,000,000.0	3,000.0
4.2	Երաժշտական պրոդյուսեր	ծառայություն	1	1,000,000.0	1,000.0
4.3	Սցենարիստ	ծառայություն	1	1,000,000.0	1,000.0
4.4	Երկրորդ ռեժիսոր	ծառայություն	1	700,000.0	700.0
4.5	Ռեժիսորի օգնական	ծառայություն	1	300,000.0	300.0
4.6	Հագուստների նկարիչ-մոդելավորող	ծառայություն	1	1,000,000.0	1,000.0
4.7	Մյուզիքլի ադմինիստրատոր	ծառայություն	1	500,000.0	500.0
5	**Տեխնիկական և Ադմինիստրատիվ մաս**				
5.1	Տեխնիկական տնօրեն	ծառայություն	1	1,500,000.0	1,500.0
5.2	Տարածքի պատասխանատու	ծառայություն	1	700,000.0	700.0
5.3	Ադմինիստրատորներ (5 անձ)	ծառայություն	5	300,000.0	1,500.0
5.4	Արտիստների և երաժիշտների համակարգող (2 անձ)	ծառայություն	2	300,000.0	600.0

5.5	Հետնաբեմի աշխատակազմ	ծառայություն	1	2,000,000.0	2,000.0	
5.6	Լուսային, հնչյունային ապահովման և լեդերի սպասարկման անձնակազմ	ծառայություն	1	1,500,000.0	1,500.0	
5.7	Էներգետիկ	ծառայություն	1	800,000.0	800.0	
6	**Հատուկ էֆեկտներ և Հրավառություն**					
6.1	Հատուկ էֆեկտներ	ծառայություն	1	3,500,000.0	3,500.0	
6.2	Հրավառություն	ծառայություն	1	6,000,000.0	6,000.0	
7	**Այլ ծախսեր**					
7.1	Տրանսպորտային ծառայություններ	ծառայություն	1	3,000,000.0	3,000.0	
7.3	Չնախատեսված այլ ծախսեր	ծառայություն	1	3,000,000.0	3,000.0	

	Ընդամենը				**336,165.0**
	Շահույթ				**13,000.0**
	Ընդամենը				**349,165.0**
	ԱԱՀ				**69,833.0**
	Ընդամենը, ներառյալ ԱԱՀ				**418,998.0**

ԿՈՂՄԵՐԻ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Պատվիրատու
«Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ

Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Գ. Հովսեփյան 26
ՀՎՀՀ՝ 01540062
«Ինեկոբանկ» ՓԲԸ
Հ/Հ՝ 2050022082671001

Հ. Մովսիսյան
Գործադիր տնօրեն

Կատարող
«Բեգրաունդ փրոդաքշն» ՍՊԸ

Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Անտառային փ. 160/14 8
ՀՎՀՀ՝ 02676654
«Էվոկաբանկ» ՓԲԸ
Հ/Հ՝ 16600559951800

Վ. Պողոսյան
Տնօրեն

Հավելված 3
27 հոկտեմբերի 2022թ.-ին ստորագրված
N 22/10/06 պայմանագրի

ԿԱՏԱՐՈՂԻ ԿՈՂՄԻՑ ՊԱՏՎԻՐԱՏՈՒՆ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՁԵՎ

«

«.....» Ընկերության թիվ 22/10/06 պայմանագրի շրջանակներում
«Մանկական Եվրատեսիլ 2022» երգի միջազգային մրցույթի բացման արարողության և գլխավոր տոնածառի լույսերի վառման կազմակերպման փաստացի ծախսերի վերաբերյալ
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

N	Անվանումը	չափման միավոր	Պայմանագրին կից նախահաշիվ			Փաստացի կատարողական			Հիմնավորող փաստաթղթի նկարագրություն
			Քանակը	Միավորի արժեքը, ներառյալ հարկերը, ՀՀ դրամ	Ընդամենը նախահաշվային գումարը, ներառյալ հարկերը, ՀՀ դրամ	Քանակը	Միավորի փաստացի արժեքը, ներառյալ հարկերը ՀՀ դրամ	Ընդամենը փաստացի գումարը, ներառյալ հարկերը, ՀՀ դրամ	
Անձնակազմի վարձատրության ծախսեր									
1									
2									
. .									
	ԸՆԴԱՄԵՆԸ								
Վարձակալական ծախսեր									
1									
2									
. .									
	ԸՆԴԱՄԵՆԸ								
Նկարահանումների կազմակերպման այլ անհրաժեշտ ծախսեր									
1									
2									
. .									
	ԸՆԴԱՄԵՆԸ								
Այլ չնախատեսված ծախսեր									
1									
2									
. .									
	ԸՆԴԱՄԵՆԸ								

	ԸՆԴԱՄԵՆԸ								
	Շահույթ								
	ԸՆԴԱՄԵՆԸ								
	Շրջանառության հարկ								
	ԸՆԴԱՄԵՆԸ								

Կատարող

« »
Հասցե՝
ՀՎՀՀ՝
Բանկ
Հ/Հ՝

Տնօրեն

_____
Կ.Տ

»:

Պատվիրատու
«Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ

Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Գ. Հովսեփյան 26
ՀՎՀՀ՝ 01540062
«Ինեկոբանկ» ՓԲԸ
Հ/Հ՝ 2050022082671001

Հ. Մովսիսյան
Գործադիր տնօրեն

Կատարող
«Բեգրաունդ փրոդաքշն» ՍՊԸ

Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Անտառային փ. 160/14 8
ՀՎՀՀ՝ 02676654
«Էվոկաբանկ» ՓԲԸ
Հ/Հ՝ 16600559951800

Վ. Պողոսյան
Տնօրեն